

ՅՈՒՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ, Ժամանակակից հայոց լեզու. Ձևաբանություն, Եր., Զանգակ, 328 էջ

ԹԵՐԵԶԱ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ*

Վանաձորի պետական համալսարան

Հայ լեզվաբանության ողջ պատմության ընթացքում ամենից շատ ուսումնասիրության է ենթարկվել հայոց լեզվի ձևաբանական մակարդակը՝ Թրակացու մեկնիչներից սկսած, Մխիթարյան միաբանության երկու ճյուղերի քերականների կապիտալ աշխատություններով հիմնավորված, մինչև մերօրյա գիտնականների աշխատությունները: Լեզվաբան բանասերները գրել են մենագրություններ, հոդվածներ, պաշտպանել թեկնածուական ու դոկտորական ատենախոսություններ, ստեղծել են ձևաբանության բուհական ձեռնարկներ ու դասագրքեր: Սակայն վերջին մի քանի տասնամյակներում բարձրագույն ուսումնական հաստատությունների մասնագիտական ֆակուլտետների բակավրիատի և մագիստրատուրայի ուսանողության համար ձևաբանությանը նվիրված որևէ նոր ամբողջական ձեռնարկ կամ դասագիրք չի հրատարակվել: Ահա այդ պակասը գալիս է լրացնելու Յուրի Ավետիսյանի սույն դասագիրքը (*դասագիրք* եզրույթը գործածում եմ, քանզի կարծում եմ՝ այն համապատասխանում է բուհական դասագրքի չափորոշիչներին): Դա հաստատվում է մի շարք փաստարկներով:

1. Հայոց լեզվի ձևաբանության վերջին ձեռնարկների կենսագրությունը, ինչպես ասվեց, ունի տասնամյակ(ներ)ի պատմություն: Անհրաժեշտությունը կար ստեղծելու նորը: Որովհետև.

Նախ. հայերենի քերականության առանցքային մի շարք խնդիրների մեթոդաբանական նկարագրությունը, դրանց դասակարգումն ու մատուցման սկզբունքները մեզանում մեխանիկորեն փոխանցվել են գրքից գիրք, առանձին իրողություններ նկարագրվել են ավանդական քերականության մեջ ըն-

* **Թերեզա Շահվերդյան** – բանասիրական գիտությունների դոկտոր, Վանաձորի պետական համալսարանի պրոֆեսոր

Тереза Шахвердян – доктор филологических наук, профессор Ванадзорского государственного университета

Tereza Shakhverdyan – Sc. D in Philology, Professor at the Vanadzor State University

Էլ. փոստ՝ tereza.shakhverdyan@mail.ru



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 03.02.2025

Հաստատվել է՝ 07.03.2025

© The Author(s) 2025

դուրսված մեթոդներով, և դրանց ուսուցումն էլ տարվել է նույն մոտեցման տրամաբանությամբ: Այս նոր ձեռնարկում այդ իրողությունները նկարագրվում և ուսուցանվում են փոքր-ինչ այլ տեսանկյունից և հիմնականում նոր մոտեցումներով ու մեթոդաբանությամբ: Հեղինակը առավել հակված է **լեզվական նյութը դասակարգելու և նկարագրելու կառուցվածքային-նկարագրական լեզվաբանության սկզբունքներով՝ փորձելով հստակ առանձնացնել քննարկվող նյութի կառուցվածքային ձևաբովանդակային և կիրառական առանձնահատկությունները:** Այսպես:

- Հայերենի կառուցվածքային համարժեք բաղադրիչները կամ ենթահամակարգային միավորները ներկայացվում և բնութագրվում են ընդհանուր միասնական մեթոդաբանությամբ. խոսքի մասերը՝ միևնույն ընդհանուր հիմունքներով կամ սկզբունքներով (իմաստաբանական, շարահյուսական, ձևաբանական, բառակազմական), քերականական կարգերը՝ իրենց երկու բնութագրական կողմերով՝ քերականական իմաստ և քերականական ձև, հոլովները՝ միասնական քերականական հատկանիշներով (հոլովական իմաստ, հոլովական ձև, շարահյուսական հիմնական կիրառություններ), դերբայները և ձևաբայերը՝ դարձյալ ըստ ընդհանուր քերականական հատկանիշների (քերականական իմաստ, կազմություն, կիրառական յուրահատկություններ, խոսքիմասային փոխանցում, եթե դա հատուկ է տվյալ դերբային) և այլն: Այս մոտեցումը ոչ միայն նպաստում է նյութը առավել համակարգված և կառուցիկ ներկայացնելուն, այլև օգտատիրոջ համար մեծապես հեշտացնում է դրա ընկալումը և յուրացումը:

- Առանձնացվում են ժամանակակից հայերենում **քերականական-ձևաբանական իմաստի** արտահայտման շատ որոշակի **հինգ ձևեր կամ միջոցներ**, հանգամանորեն նկարագրվում են դրանք, և ներկայացվում են այդ ձևերի և դրանցով արտահայտված իմաստների քերականական հարաբերության դրսևորման երեք հիմնական տեսակները (քերականական մեկ ձևով՝ մեկ քերականական իմաստ; միևնույն ձևով՝ տարբեր իմաստներ (քերակ. համանություն); տարբեր ձևերով՝ միևնույն քերականական իմաստը (քերակ. հոմանշություն)):

- Խոսքիմասային տեղաշարժերում առանձնացվում է երկու տեսակ՝ ներխոսքիմասային և միջխոսքիմասային: Վերջինները բնութագրվում են նորագույն լեզվաբանության մեջ ընդունված և հստակ առանձնացվող տարատեսակներով՝ **խոսքիմասային փոխանցում և խոսքիմասային տարաբեկություն**: Հանգամանորեն ներկայացվում են լիակատար և մասնակի փոխանցումները պայմանավորող գործոնները՝ գրաբարի քարացած քերականական ձևերի գործածություն այլ խոսքի մաս(եր)ի նշանակությամբ (գուցե, հասցե, հազիվ), բառի նախնական/սկզբնային իմաստի մթագնում (օդապարիկ, օդաչու), փոխանուն կիրառություն (թռչուն, խնձորենի, զինվորական) և այլն:

- Գոյականի առկայացման կարգը ներկայացվում է ընդունված մոտեցումներից փոքր-ինչ տարբեր մոտեցմամբ՝ երկու ենթակարգերով՝ **որոշյալության ենթակարգ** (որոշիչ հոդ, ստացական հոդ, ցուցական հոդ, դիմորոշ հոդ) և **անորոշության ենթակարգ** (ընդհանուր անորոշ առում՝ *զրո* ձևով՝ *գիրք, տետր*, և մասնական անորոշ առում՝ *մի* հոդով՝ *մի գիրք, մի տետր*):

- Գոյականի հոլովական զուգաձևերում առանձնացվում են կոնկրետ տարատեսակներ՝ **հոլովային զուգաձևեր** (առավոտով/առավոտի, շաբթու-մով/շաբթմամբ, կղզուց/կղզիից, արյունով/արյամբ), **հիմքային զուգաձևեր** (մարզիչի/մարզչի, եզրափակչում/եզրափակիչում, օրից/օրվանից), **իմաստային զուգաձևեր** (ծամի/ծամվա, առաջից/առաջվանից) և **ռճական զուգաձևեր** (կայսրի/կայսեր, դատեր/դուստրի, Կիլիկիո/Կիլիկիայի). զուգաձևային փաստերը նկարագրվում են ըստ այդ տարատեսակությունների:

- Դերանուն խոսքի մասի ներխոսքիմասային դասակարգումը առաջին անգամ բուհական ձեռնարկում կատարվում է ոչ թե ըստ դերանուն համարվող բառերի արտահայտած իմաստների, ինչպես ընդունված է ասել (իրականում այդ դասակարգման մեջ պահպանված չէ սկզբունքի միասնականությունը)՝ *անձնական, ցուցական, հարցա-հարաբերական* և այլն, այլ ըստ դերանունների արտահայտած ընդհանուր իմաստների և այլ խոսքի մասերի հետ ունեցած քերականական հարաբերության՝ **գոյական** (ես, դու, սա, դա, իրար, ով, ինչ, ոչ ոք, ոչինչ), **ածական** (այս, այսպիսի, յուրաքանչյուր, ոմն, ինչ-որ, ուրիշ, այլ, որևիցե), **մակբայ** (որտեղ, երբ, ուր, այսպես, այնտեղ, ինչպես, ուրևիցե) և **թվական** (մի քանի, որքան, ինչքան, որերոդ, քանիերոդ) **դերանուններ**. այս դեպքում պահպանվում է դասակարգման սկզբունքի միասնականությունը, և դասակարգվող տեսակները առանձնացվում են ըստ իրենց քերականական հատկանիշների:

- Արդի արևելահայերենի համար առանձնացվում են **բայի կառուցվածքային** շատ որոշակի **հինգ տիպեր**. 1. **է** լծորդության պարզ (ինչպես նաև կրավորական և բազմապատկական) բայեր՝ *գրել, երգել, գրտտել, գրվել*, 2. **է** լծորդության **ն**, **չ** ներածանց ունեցող բայեր՝ *հագնել, թռչել*, 3. **է** լծորդության պատճառական բայեր՝ *խոսեցնել, հագցնել, բարձրացնել*, 4. **ա** լծորդության պարզ բայեր՝ *կարդալ, խաղալ*, 5. **ա** լծորդության **ան, են** ներածանց ունեցող բայեր՝ *բարձրանալ, մոտենալ*: Նշված տիպերից յուրաքանչյուրը բնորոշվում է քերականական նույն հատկանիշներով, այսինքն՝ նույն տիպի մեջ առանձնացված բայախմբերը դրսևորում են **քերականական նույն վարքագիծը**: Կրավորական և բազմապատկական բայերը իրենց քերականական հատկանիշներով նույնանում են **է** լծորդության պարզ բայերին:

- Քննարկվում են կրկնաստեղծության ձևավորման հնարավոր գործոնները, և ըստ այդմ՝ առանձնացվում և քննվում են կրկնաստեղծության շատ կոնկրետ տարատեսակներ՝ **իմաստային կրկնաստեղծություն** (ապրեց երկար կյանք/ապրեց Երևանում), **խնդրատական կրկնաստեղծություն** (կարոտում է

հայրենիքին/կարոտում է հայրենիքը) և **գործառական կրկնասեռություն** (մարդիկ հավաքվեցին/քարերը հավաքվեցին):

• Հայերենի քերականություններում բազմազան մոտեցումներով նկարագրվող պակասավոր բայերը գրքում ներկայացվում են գիտականորեն հիմնավորված տարբերակմամբ՝ որպես **անկանոն բայերի** առանձին տարատեսակություն՝ **բուն անկանոն բայեր** և **պակասավոր անկանոն բայեր**: Եվ դրանց քերականական նկարագրությունը տրվում է ոչ թե ըստ բայական լծորդությունների և բայի կազմության (ինչպես ընդունված է հայոց լեզվի բուհական ձեռնարկներում), այլ ըստ անկանոնության դրսևորումների՝ տարարմատություն (ուտել-կերա), հիմքի մասնակի փոփոխություն (դառնալ-դարձա), հրամայականի արմատական ձևեր (բեր, առ, տուր), անցյալ կատարյալում գուգաձևություններ (բերի/բերեցի, տվի-տվեցի) և այլն: Այս մոտեցումը օգնում է ավելի դյուրությամբ և համակարգված յուրացնելու նյութը:

Երկրորդ. թեև ձևաբանությունը լեզվի համեմատաբար արագ փոփոխվող մակարդակներից չէ, սակայն տասնամյակների ընթացքում օբյեկտիվորեն զգալի տեղաշարժեր են կատարվում նաև այդ մակարդակում: Տեղաշարժերը զգալի են հայերենի ձևաբանության հատկապես խոսքիմասային փոխանցումներում, միավանկ վերջնաբաղադրիչով գոյականի հոգնակիի կազմության մեջ, հոլովական գուգաձևերում, սեռային անցումներում և կրկնասեռության մեջ, արգելական հրամայականի կազմության և առհասարակ բայական համակարգում և այլն: Բազմաթիվ քերականական ձևեր ու նաև քերականական իմաստներ ժամանակի ընթացքում հնացել և դուրս են մղվել, բայց դրանք մեզանում մեխանիկորեն փոխանցվել են դասագրքից դասագիրք: Առաջ են եկել նոր ձևեր, որոնք չեն հիշատակվել գործածության մեջ եղած ձեռնարկներում: Այսպես, օրինակ. *հիշելիք, հագնելիք, պատկանելիք* ձևերը «մաքուր գոյականներ» չեն, *գիտեմ, արժեմ, ունեմ* պակասավոր բայերի համար հրապարակի վրա եղած բացատրական բառարաններում նշված սկզբնաձևերը (*գիտել, արժել, ունել*) արդի գրական հայերենում գոյություն չունեն, *գիտենալ* բայը և մասնավորապես դրա խոնարհված ձևերը (*գիտենում եմ, գիտեցել եմ, գիտեցի՛ր* և այլն) աստիճանաբար դուրս են մղվում գործածությունից (այդ բայի փոխարեն ավելի հաճախ գործածվում է *իմանալ*-ը), գործածական ակտիվությունից զուրկ են *հուսալ, ցանկալ, զարկել* բայերը. փոխարինվում են *հույս ունենալ, ցանկանալ, խփել/հարվածել* տարբերակներով, *լալ* բայը վերածվել է պակասավոր բայի (անգործածական են՝ *մի՛ լա/մի՛ լար, մի՛ լաք; լալու եմ, լալու ես* և այլն), իսկ *լացեց, լացեցինք, լացել եմ, լացի՛ր* և նման ձևերը ոչ թե *լալ* բայի խոնարհված ձևեր են, ինչպես ավանդաբար ներկայացվել է, այլ *լացել* բայի, *բացել*-ը, հակառակ դասագրքային պնդումի (տե՛ս գիրքը՝ էջ 244), չի վերածվել կանոնավոր բայի և որոշ բայաձևերում (*բա՛ց, մի՛ բաց, չունի* ցոյական հիմքով գուգաձևություն՝ *բացեցե՛ք*՝ ի տարբերություն *ե* լծորդության բոլոր կանոնավոր պարզ բայերի) դրսևորում է անկանոնություն, *Գ*–

յումրով, Լոռով, Լոռում ձևերը նվազ գործածական են, քան *Գյումրիով, Լոռիով, Լոռիում* և նման ձևերը (հակառակ ՀՀ Լեզվի պետական կոմիտեի որոշման, որը պիտի վերանայվի), *ինչնէ, ինչնէիցե* բառերը զրկվել են իրենց նյութական նշանակությունից և հանդես են գալիս միայն որպես վերաբերականներ՝ զիջական նշանակությամբ, հետևապես չպետք է ներկայացվեն դերանունների շարքում, **զրոն** (0) թվական է, քանակական թվական, որը, սակայն, մեր բացատրական բառարաններում արձանագրված է միայն **զ** (զոյական) նշումով, *անոր* (<*աներ*), *սկետոր* (<*սկետուր*), *ամուսնի*, *Անու*, *հոգնակու*, *գարունքվա*, *մի՛ գրեցեք*, *մի՛ լինիր*, *մի՛ գաք* և նման բազմաթիվ ձևեր հնացել են ու գործածությունից դուրս մնացել և հետևաբար տեղ չպետք է ունենան նորմատիվ քերականության դասագրքերում, և այլն, և այլն: **Ձևաբանության նոր ձեռնարկը կոչված է արձանագրելու այս տեղաշարժերը:**

Տեղաշարժերի և առհասարակ լեզվի զարգացման միտումների նկարագրությունը առավել համոզիչ դարձնելու համար գրքում բերվում են նաև հարցումային և համացանցային վիճակագրության տվյալներ, տրվում են դրանցից բխող որոշակի լուծումներ:

2. Դասագիրքը ամփոփում է երեք շերտ քերականական գիտելիքներ:

Առաջինը արդի գրական արևելահայերենի **լեզվական նորմն է** (իր զարգացման միտումներով), որը տրված է՝ որպես ընդհանուր շարադրանք:

Երկրորդը հայոց լեզվի տեսության համառոտ պատմությունն է՝ սկսած նոր ժամանակների հայ քերականագիտության հիմնադիր լեզվաբաններ Ա. Այտընյանից և Ս. Պալասանյանից մինչև ժամանակակից լեզվաբաններ. տրվում է **ՏԵՍԱԿԵՏ** խորագրի ներքո:

Երրորդը արդի արևելահայերենի **գործնական քերականությունն է**, որը ներկայացվում է փաստական օրինակներով. շեղումները և յուրահատուկ դրսևորումները բացատրվում են **Ծանոթություն**-ներով:

Հայերենի ուսումնական քերականություններում, ցավոք, միշտ չէ, որ քերականական իրողությունը բացատրվում է բնութագրական հարուստ ու բազմազան օրինակներով: Այս գիրքը առանձնանում է գործնական նյութի աննախադեպ առատությամբ: Բացի այդ՝ օրինակները քաղված են ոչ միայն գեղարվեստական գրականությունից, ինչպես սովորաբար ընդունված է հայոց լեզվի դասագրքերի կազմության մեջ, այլև հայերենի գործառնական տարբեր ոլորտներից՝ պաշտոնական գրագրություն, գիտական գրականություն, զանգվածային լրատվամիջոցներ և այլն: Օրինակների մի զգալի մասը վերցված է գործառնական գրական բանավոր խոսքից. դա ավելի համոզիչ ու վստահելի է դարձնում լեզվական փաստի նկարագրությունը: Ի դեպ, և՛ տեսական հարցադրումների, և՛ գործնական նյութի առնչությամբ հաճախ զուգահեռ ներկայացվում և բացատրվում են **արդի արևմտահայերենի** համապատասխան իրողությունները:

Նյութի և գիտելիքների մատուցման այս եռամակարդակ միասնությամբ

առավել ամբողջական և հանգամանալից է ներկայացվում արդի գրական արևելահայերենի տեսական-հայեցակարգային և գիտագործնական նկարագրությունը:

3. Խոսքի մասերի ընդհանուր նկարագրությունը ավելի ամբողջական է դառնում նաև մեթոդաբանական այն յուրահատկությամբ, երբ հարաբերակից խոսքի մասերը բնութագրվում են նաև միմյանց հետ ունեցած քերականական (իմաստային, կառուցվածքային և գործառական) հարաբերության մեջ՝ «Ածականը որպես խոսքի մաս. հարաբերակցությունը այլ խոսքի մասերի հետ», «Դերանունը որպես առանձին խոսքի մաս. հարաբերակցությունը այլ խոսքի մասերի հետ» և այլն:

4. Հայերենի քերականության ձեռնարկներում երբեմն շրջանցվում են վիճելի կամ տարակարծություններ ծնող հարցերը, կամ դրանք լուսաբանվում են մասամբ: Այս ձեռնարկի հեղինակը այդպիսի մի շարք հարցերի պատասխանը փորձել է տալ՝ հաճախ խորանալով նաև խնդրի պատմական-ձևաբանական զարգացման մեջ: Այսպես՝ **չ/կրավորական մասնիկի** ձևաբանական զարգացումը կարծես իր հնարավոր բոլոր դրսևորումներով նկարագրվում է ձեռնարկում. **վ-ն**՝ որպես ծագումնաբանորեն կրավորական ածանց, բայց բառակազմական արժեքով (*սիրահարիչ-սիրահարել-սիրահարվել, բնակիչ-բնակել-բնակվել*), **վ-ն**՝ ծագումնաբանորեն և նշանակությամբ կրավորական ածանց (*գրել-գրվել, ասել-ասվել*), և **վ-ն**՝ ի սկզբանե որպես զուտ բառակազմական բաղադրիչ (բառակազմական ածանց կամ արմատի վերջնահնչյուն. **արտասվել** (արտասու-ել), **զգվել** (զգու-ել), **երդվել** (երդուել<երդնուլ<երդու նուլ. «բուն արմատն է **երդու**» (Հ. Աճառյան)), **թթվել** (թթու-ել), **կտվել** (<կոտել<կտիւ-ել), **հաշվել** (հաշուել<հաշիւ-ել), **պատվել** (պատուել-պատիւ-ել)):

Նույն մոտեցմամբ հանգամանորեն քննվում են **պատճառա(կան)կերպ բայերը**, դրանց կառուցվածքային և իմաստային հարաբերակցությունը բուն պատճառական բայերի հետ, **ժխտման ձևաբանական կարգը**, **ածականի համեմատության աստիճանը՝ որպես քերականական կարգ**, **բնաձայնությունների՝ առանձին խոսքի մաս լինելու վիճարկվող հարցը** և այլն:

5. Քերականական արտահայտության ձևով կամ իմաստով մոտ կամ նման և շփոթվող իրողությունները, որպես կանոն, ավելի հանգամանորեն և տարբերակիչ գծերով են բացատրվում. **Ծանոթություն** բաժնում սովորաբար տրվում են բացատրություններ՝ դրանք իրար հետ չշփոթելու, միմյանցից տարբերելու համար, ինչպես՝ չեզոք սեռի բայերի՝ փոխաբերական իմաստով («Գայլը ոռնում է իր անկշտում վիշտը») կամ գործողության ներքին խնդրառությամբ («Լաց լացել») գործածությունները կրկնասեռության հետ չշփոթելու, ներգործող խնդիրը՝ պատճառի պարագայից կամ բացառականով անջատման խնդրից («Քամու ուժեղ հարվածից ճյուղը պոկվեց ծառից») տարբերակելու համար, երբ երկու դեպքում էլ նախադասության ստորոցայլը արտահայտված է կրավորական սեռի բայով, և այլն:

6. Նյութը հաջողությամբ յուրացնելուն և գիտելիքները ստուգելուն օգնում են նոր ժամանակների դասագրքերում հաճախ գործադրվող մեթոդական-կառուցվածքային հնարները՝ ամեն թեմատիկ մասի վերջում տրվող «Հարցեր և առաջադրանքներ»-ը, թեմային վերաբերող «Գրականություն»-ը, գրքի վերջում ներկայացված ինքնուրույն աշխատանքի թեմաները («Զեկուցումների և ռեֆերատների թեմաներ») և «Տերմինացանկ»-ը:

Գրքում կան առանձին բացթողումներ, վրիպակներ, քիչ համոզիչ օրինակներ: Առանձին թեմաների քննություն-նկարագրությունը ձգձգված է, ինչպես՝ հոլովական գուգաձևություններին վերաբերող հատվածը, **մերոնք/ձերոնք** բառերի խոսքիմասային պատկանելության հարցը, սոսկածանցավոր բայերի հիմքային փոփոխությունների իմաստային բնութագրությունը և այլն: Դրանց նկարագրությունը առավել բնորոշ է մենագրական աշխատանքին, իսկ դասագրքում այդ նկարագրությունը կարող էր և պետք է լիներ առավել համառոտ ու հստակ:

Ամփոփելով կարող ենք ասել, որ հայ բանասիրության ֆակուլտետի ուսանողների սեղանին է դրված մի դասագիրք, որը գործնական ու տեսական նյութի ընդգրկման ծավալով, գործադրված մեթոդաբանությամբ, ներկայացված տեսակետների հարուստ բազմազանությամբ և դրանց վերաբերյալ հեղինակի մեկնաբանություններով կարող է հաջողությամբ ծառայել արդի արևելահայերենի քերականության, մասնավորապես՝ ձևաբանության իմաստային և կառուցվածքային բովանդակությունը ըստ ամենայնի յուրացնելուն: